ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> դեկտեմբերի 2012թ. N: 341-Ա Գյումրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին նախատեսված <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված հատկացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 19 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 1991-1994 թվականներին մարտական գործողությունների ժամանակ Շիրակի մարզից զոհված ազատամարտիկների ընտանիքներին ցուցաբերել ֆինանսական օգնություն՝ համաձայն N1 հավելվածի:

2. 1994 թվականի մայիս ամսից մինչև 2012 թվականը ներառյալ զինվորական ծառայության ընթացքում Շիրակի մարզից զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքներին ցուցաբերել ֆինանսական օգնություն՝ համաձայն N2 հավելվածի:

3.Հայաստանի Հանրապետության սահմանները պաշտպանելու, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության ընթացքում 1-ին խմբի հաշմանդամ դարձած շիրակցի անձանց՝ համաձայն N3 հավելվածի.

4.Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամներին, ինչպես նաև Շիրակի մարզում բնակվող Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում թիկունքում իրենց պարտականությունները կատարած անձանց՝ համաձայն N4 հավելվածի.

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին՝ ապահովել վճարման կատարումը:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝